


# ԱՐԱՐԱՏ

## ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ Գ. 1868 ՅՈՒԼԻՍ.


## ԿՐՕՆԱԿԱՆ

### Հայոց Ազգի Դարձը ՚ի Քրիստոնէութիւն

(Շարունակութիւն եր. 10)

Թադդէոս առաքեալ մի յԵօթանասնից իր առաքելական քարոզութիւնը ՚ի Հայաստան սկսած ժամանակին՝ Քրիստոսի Տեառն մերոյ երկոտասան աշակերտք տակաւին յԵրուսաղէմ էին ՚ի քարոզութիւն Աւետարանին, որ յայտնի է սրբոյն Ստեփաննոսի պատմութեան մէջ ՚ի գործս առաքելոց. "Նաև ամենեքեան ցրուեցան ՚ի գաւառս Հրէաստանի և ՚ի Սամարիա բաց յԱռաքելոցն":

Նայ եղաւ Քրիստոսի համբարձման եօթներորդ տարին կամ ՚ի քառասներորդ ամի փրկչին. ուստի հաւաստի կ՚երևի այս բանէն որ Հայաստան ՚ի քրիստոնէութիւն դարձած պիտի լինի երկրորդ ամի համբարձման քրիստոսի,

երբ որ տակաւին Առաքեալք չէին գնացած յաշխարհ ամենայն 'ի քարոզութիւն, երբ որ եօթանասունքն ևս տակաւին Հրէաստան և Սամարիա կ'քարոզէին։

Ժամանակագրական հաշուով կ'ստուգեմք այս, որ Եօթանասունքն փրկչական եօթներորդ թուին յետ համբարձմանն ցրուեցան 'ի քարոզութիւն. և հասարակ կարծիքով այս ժամանակին կըտանք Թադդէոսին երթն էլ առ Աբգար,

Մինչ որ ճշդութեամբ քննեմք Քրիստոսի խոստմունքը առ Աբգար իւր փրկչական նամակին մէջ և մեր Խորենացւոյ վկայութիւնը իրացն ստուգութեան համար, կարող եմք աւելի հաւանականաբար ասել, որ Թադդէոս առաքեալը Ստեփաննոսի քարկոծմանէն էլ եօթը տարիով յառաջ եկած է 'ի քարոզութիւն Հայաստանեայց. ըստ որում Փըրկիչն մեր յետ իւր համբարձման կ'խոստանայ Աբգարու առաքել "զմի յաշակերտաց իւրոց"։

Խորենացին էլ "Յետ համբառնալոյ Փրկչին մերոյ, կ'գրէ, Թովմաս առաքեալ մի յեօթանասնից անուն զԹադդէոս 'ի քաղաքն Եդեսիա"։ Եւ արդարև հիւանդին բժիշկ ուղարկելու Փըրկիչն մեր ինքնին էլ կ'ճանապարհէր յետ համբարձման իւրոյ, քան թէ թողուր առաքելոց յաշխարհս ամենայն գնալու ժամանակ։

Ուստի այս հաշուով Հայաստանի 'ի քրիստոնէութիւն դառնալը վաթսուն տարիով ուրիշ նախընծայ պարծեցող ազգերէն յառաջ եղաւ. այսինքն մինչև Պօղոս առաքելոյ Հռովմ գնալը։

Արդ այսպէս Հայաստանեայց եկեղեցւոյ քրիստոնէութեան ճշմարիտ վէպը ըստ իրայն եղելոց կ'տայ մեզ Մովսէս Խորենացի ազգային հաւատարիմ և վաղեմի պատմիչը, և հաւաստի է մեզ, որ նա անհաւատարիմ տեղէ առած չէ, այլ ստոյգ աղբիւրէ. զի որպէս ինքն Խորենացին հաստատուն կը կացուցանէ իւր պատմագրութիւնը, երկրորդ գրոց երեսուն և վեցերորդ գլխին մէջ կ'գրէ որ Աբգարու և Սանատրկոյ ժամանակի բոլոր գործքերը գրեց Ղերուբնայ պատմագիրը՝ որդի Ափշադարայ դպրի, և դրաւ զայն Աբգարու դիւանին մէջ Եդեսիայ, որ Աբգարու դիւանադպիրն էր, ուստի կ'առնու և ինքն Խորենացին։

Քրիստոնէութիւնը որ այսպէս Հայոց մէջ Եդեսիա սկսաւ, անտի ևս բոլոր Հայաստան տարածուեցաւ 'ի ձեռն Թադդէոս և Բարդուղիմէոս առաքելոց և հետևաբար նոցա յաջորդաց քարոզութեամբ. որոնք մէկմէկէ եկեղեցական կառավարութիւնը յաջորդաբար առնելով, մինչև սուրբն Գրիգոր Լուսաւորիչ հասուցին, որոց գործքերը դընելէն յառաջ կ'դնենք պատմական տեղեկութիւն ընդհանուր տեսութեամբ Հայաստանեայց եկեղեցւոյ Առաքելական յաջորդութեան վրայ՝ քաղելով զայն հին ձեռագիր թերթերէ.